



ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

N 01/01-854

« 25 » 06 20 24

ՈՐՈՇՈՒՄ

ԱԶ Ռուբեն Բաղդիշյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ «Պատվիրատու») և ԱԶ Ռուբեն Բաղդիշյանի (այսուհետ «Կատարող») միջև 2024 թվականի մայիսի 31-ին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում կնքվել է N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-24/ԷՓ-1 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր), ըստ որի Կատարողը պարտավորվում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը Պատվիրատուին մատուցել խմբային էքսկուրսիայի կազմակերպման ծառայություններ: Սակայն 2024 թվականի հունիսի 11-ին Կատարողը Պատվիրատուին ծանուցել է, որ առաջացած խնդիրների պատճառով չի կարող մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն 2024 թվականի հունիսի 17-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը ամբողջությամբ: Պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով, կիրառելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, 2024 թվականի հունիսի 17-ին ԱԶ Ռուբեն Բաղդիշյանին ուղարկվել է համապատասխան ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

ԱԶ Ռուբեն Բաղդիշյանին (հասցե՝ Ք. Երևան Զաքյան 5, ՀՎՀՀ 23198053) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ա. Գրիգորյան

